

Անոնց այդ ոգին, անոնց աշխատանքը հոգևորող այդ սկզբունքը եւ գործողութեան այդ մեթոտը պէտք է այսուհետեւ ևս ըլլայ ամէն հայ սերունդներու մշակութային գործունէութեան ծրագիրը։ Անոնցմէ՛ պէտք է առնուն, մեր կրթութեան եւ դաստիարակութեան գործը՝ իր օրինակը, մեր զրականութիւնը, մեր կրօնական, իմաստասիրական, գիտական, գեղարուեստական ևայլն պարապունները՝ իրենց ներշնչութիւնը, մեր բեմը, մեր մամուլը, մեր հասարակական կամ ընկերային գործունէութիւնը՝ իրենց ուղղութիւնը, ի մի բան՝ անոնց նոյն այդ ճամբէն պէտք է անցնի մեր ամբողջ մշակոյթը։ Որ, առանց ատոր պիտի չկարենայ ունենալ մեզի համար որևէ նպատակայարմար արժէք։

Ազգային ոգի և քրիստոնէական նկարագիր․ ա՛յս պէտք է լինի մեր հանրային զարգացումը յատկաւորող տիպը, եթէ կ'ուզենք շարունակել ապրիլ իբրեւ ցեղային ինքնութիւն ունեցող ժողովուրդ և բարոյական միութիւն։

Ահա՛, ըստ մեզ, սրբոց թարգմանչաց վերջին տօնին դասը, երբորդ դասը։

* * *

Որք զարդարեցին Տնօրինաբար զիմաստ անեղին, հաստատելով յերկրի գգիր կենդանի՝ հովուել ըզօս նոր Իսրայէլի. երգով փաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեսցուի։

Որք զերկբաւոր մեծութիւն փառաց խաւար կոչեցին. ապաւինելով ի յոյս անմահ փեսային՝ աննառ Բանին արժանի եղեն. երգով փաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեսցուի։

Որք զօրութեամբ ձօր իմաստութեան էին անեղի, հաստատեցին զաթոռ սրբոյն Գրիգորի թարգմանութեամբ նշանագրութեան. երգով փաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեսցուի։

Որք նորափետուր բանիւ զարդարեալ՝ պայծառազգեցան եկեղեցիք Հայաստանեայց ի ձեռն սրբոյն Սահակայ. երգով փաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեսցուի։

Որք թագաւորաց ազգաց եւ ազանց գերագոյն ցուցին արփիափայլ զերգս հոգեւորս ընտրեալ դասուց վերին Սիովնի. անմասոյց լուսոյն երկրպագեսցուի։

Որ խորհրդեամբ նշմարիս լուսոյ փառաց անեղին նկարագրեցաւ մեզ գիր կենդանի յարգանդ մաքուր մեծին Մեսրոպայ. անմասոյց լուսոյն երկրպագեսցուի։

Որք զծածկեալ խորհուրդ աստուածգիտութեան Տնօրինաբար յայտնեալ ծանուցին՝ հանգոյն սրբոյ մեծին Մովսէսի. անմասոյց լուսոյն երկրպագեսցուի։

Որ յօրինակ նշմարիս սիրոյ սուրբ առաքելոցն, աղբերաբար ի ձեզ էացաւ Հոգի շնորհաց բոլորումն անսպառ. անմասոյց լուսոյն երկրպագեսցուի։

Որ երկոխումք սուրբ լուսաւորչօք Տանն թորգոմայ հաստատեցեր զեկեղեցիս Հայաստանեայց, զլոյս իմաստից ի մեզ ծագելով. մաղթանօք սոցա Քրիստոս խնայեա ի մեզ։